Յովհաննէս կարբեցի պատրիարգին Հայոց, յաղագս անկարգ կառաւարութեան Սրբոյ արարատեան աթոռոյ (որպէս որ խանգարեալ կառաւարութիւն արարատեան եկեղեցոյ գրի) և քանիցս խնդրեցաք զի նա կառավարութիւնն կարգադրեսցէ, այսինքն անարժան եպիսկոպոս չօրհնելով, ի ռամիկ անձանց համաձայն մինիստրի գրութեանն քահանայ չձեռնադրէ, նմանապէս և զհիմարս և զանուսում անձինս և այլ անկանոն բանք չառնելով, որք չեն գրելիք և Ձերին սուրբ ականջացն լսելիք և որքան մեք խնդրեցաք, բայց նա եւս առաւել յաւելացոյց, երեսուն տանն մին քահանայ, ի յիմար անցանց օրհնելով. անարժանից զխաչ տալով, որոյ պատճառն ոչ այլ ինչ է եթէ ոչ փող առնուլ և նա եւս վասն իւր և ընտանեաց իւրոց է առնում, և ոչ թէ վասն հանդերձաւորելոյ և կառաւարելոյ միաբանից Սուրբ աթոռոյն. բաց ի սոցանէ վաճառէ զանօթս եկեղեցականս, և յորժամ խնդրէինք զի նա մեր գիտութեամբ արասցէ զայն ամենայն վաճառելն և փողի խարջելն. իսկ նա փոխանակ լսելոյ զխնդիրս մեր անպատիւ արար զմեզ և անհաւատ ձայնեաց. վասնորոյ և մեք չորս անձինք, ի վերոյ գրելոց, անճարացեալ զկօպեայն խնդրանաց մերոց զոր մատուցեալ էին պատրիարքին ընդ այլում խնդրագրի առաքեցինք առ բարձր գերազանց կուսակալն Վրաստանու ներեալ Օտինֆանտէրի բարոն Ռօզինն, զի թերեւս նա վերահասու լինիցի և մեր խնդիրքն հասուսցէ առ ում որ հարկն է, վասն զի ազգք հայոց յայսպիսի անկարգութեանց որք լինին Սուրբ աթոռն, յուսահատեալ են. որոյ ապացուցութիւն է, զի հայք օսմանեան տէրութիւնն բաժանեցան արարատեան եկեղեցոյ և չկամին զի վարդապետք արարատեանք մտանիցեն յերկիրն իւրեանց գրութեամբ սուլթանին զորփայչայն անցանելով. և սորա պատճառն ոչ այլ ինչ է, եթէ ոչ անկարք արարմունք Յոհաննէս պատրիարգին և արծաթասիրութիւն նորին առաւել քան զչափն. և յորժամ Յոհաննէս պատրիարքն լաւ թէ մեք չորք անձինք խնդիր ենք մատուցել կուսակալին, յայնժամ ինքն եւս գրեաց կուսակալին թէ այս չորս անձինքն, բունդովչիկ են, պարտին կորնչիլ վանքէն, վասնորոյ անցեալ թիվ մայիսի 12ին առաքեաց զիս ի Թիֆլիզ քաղաք և մեք ապաւինելով արդարադատութիւնն կանոնաց կայ-